

Համաձայնեցված է
Հայաստանի Հանրապետության
ֆինանսների նախարար

_____ Վ.Գաբրիելյան

Հայաստանի Հանրապետության
կառավարությանն առընթեր պետական
եկամուտների կոմիտեի նախագահ

_____ Գ.Խաչատրյան
<<20>> սեպտեմբերի 2011թ.

N 7

Պ Ա Ր Զ Ա Բ Ա Ն ՈՒ Մ

ՎԵՐՋՆԱՅԻՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ (ADSL ՄՈԴԵՄ, ՍՊԼԻՏԵՐ ԵՎ ԱՅԼՆ) ԵՎ ԴՅՈՒՐԱԿԻՐ ՀԱՄԱԿԱՐԳԻՉՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՄ Ի ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐԻՆ ՀԱՆՁՆԵԼՈՒ ԴԵՊՔՈՒՄ ԾԱԽՍԵՐԻ ՃԱՆԱԶՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

<<Շահութահարկի մասին>> ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 12-րդ հոդվածի 1-ին կետի և ՀՀ ԿԱ ՀՊԾ պետի 02.04.2004թ. N 1-05/7-Ն հրամանով հաստատված <<Ռեզիդենտների կողմից շահութահարկի հաշվարկման և վճարման կարգի մասին>> հրահանգի (այսուհետ՝ Հրահանգ) 5.2-րդ կետի <<ե>> ենթակետի համաձայն հարկվող շահույթը որոշելիս համախառն եկամուտը նվազեցնում է սեփականության իրավունքով պատկանող (կամ ֆինանսական վարձակալության վերցված), գործունեության մեջ օգտագործվող և մաշվածքի ենթակա՝ հիմնական միջոցների ամորտիզացիոն մասհանումների գումարի չափով: Օրենքի 10-րդ հոդվածի և 16-րդ հոդվածի 1-ին կետի <<բ>> ենթակետի, Հրահանգի 5.1-րդ և 5.2-րդ կետի <<ժ>> ենթակետի համաձայն հարկվող շահույթը որոշելիս համախառն եկամտից նվազեցվում են ՀՀ տարածքում գույքազրկի և մարքեթինգի ծախսերը:

ՀՀ կառավարության 27.11.1998թ. <<Հարկման նպատակով համախառն եկամտից իրականացվող նվազեցումների որոշ տեսակների առավելագույն թույլատրելի չափեր սահմանելու մասին>> N 753 որոշման 2-րդ կետի <<գ>> և <<ժ>> ենթակետերի համաձայն գույքազրկի ծախսեր են համարվում տարբեր տեսակի տեղեկատվական միջոցներով անորոշ թվով անձանց շրջանում հարկատուների, ապրանքների, գաղափարների կամ նախաձեռնությունների մասին այն տեղեկությունները տարածելու համար կատարվող ծախսերը, որոնք կոչված են ձևավորելու կամ պահպանելու հետաքրքրությունն այդ հարկատուների, ապրանքների կամ նախաձեռնությունների նկատմամբ, իսկ մարքեթինգի ծախսեր են համարվում ապրանքային և ծառայությունների շուկայի ուսումնասիրության, ապրանքային և ծառայությունների շուկայում առաջխաղացման հետ կապված ծախսերը:

Օրենքի 16-րդ հոդվածի 1-ին կետի <<ը>> ենթակետի և Հրահանգի 5.6-րդ կետի <<գ>> ենթակետի համաձայն շահութահարկի հաշվարկման

նպատակով համախառն եկամտից չեն նվազեցվում անհատույց տրամադրված ակտիվները (բացառությամբ՝ Օրենքի 23-րդ հոդվածում նապատեսված դեպքի):

Դիտարկվող իրավիճակը հետևյալն է.

Կապի ոլորտում գործունեություն իրականացնող առևտրային կազմակերպության (այսուհետ՝ Ընկերություն) և բաժանորդի միջև կնքված *Hi-Line (ADSL) ծառայության մատուցման պայմանագրի* շրջանակներում Ընկերությունը բաժանորդին մատուցում է հանրային էլեկտրոնային հաղորդակցության Hi-Line ծառայություն Ընկերության կողմից սահմանված սակագներով, որոնք ներկայացվում են Ընկերության ինտերնետային կայքում (բաժանորդի կողմից ընտրված սակագնային տարբերակը նշվում է բաժանորդի ներկայացված հայտում): Hi-Line ծառայությունից օգտվելու ժամանակահատվածում բաժանորդին տրամադրվում է իդենտիֆիկացիոն ժամանակավոր համարը: Պայմանագրով Hi-Line (ADSL) ծառայության մատուցումը ապահովելու համար Ընկերության կողմից բաժանորդին առանձին պայմանագրով ի սեփականություն կարող են փոխանցվել անհրաժեշտ վերջնային սարքավորումները (ADSL մոդեմ, սալիտեր և այլն): Բոլոր դեպքերում բաժանորդի կողմից օգտագործվող վերջնային սարքավորումները պետք է համատեղելի լինեն Ընկերության ցանցի հետ՝ Ընկերությունից ձեռք բերված վերջնային սարքավորումների փոխարեն այլ սարքավորումներ օգտագործելու դեպքում:

Ընկերության և բաժանորդի միջև կնքված *Դյուրակիր համակարգչի օգտագործման հանձնելու մասին պայմանագրի* շրջանակներում, հաշվի առնելով կողմերի միջև կնքված Hi-Line (ADSL) ծառայության մատուցման պայմանագիրը և Ընկերության ձգտումը ընդլայնելու համացանցի (Ինտերնետ) հասանելիության հնարավորությունները (Ընկերության կողմից մատուցվող Hi-Line /ADSL/ ծառայություններից օգտվելու պայմանների ապահովումը), Ընկերությունը բաժանորդի ժամանակավոր օգտագործման է հանձնում դյուրակիր համակարգիչ, որը բաժանորդը պարտավորվում է օգտագործել պայմանագրի պայմաններին համապատասխան: Մինչև պայմանագրի ավարտը բաժանորդի նախաձեռնությամբ կամ պայմանագրով սահմանված պարտավորությունները չկատարելու հետևանքով պայմանագիրը լուծելու դեպքում բաժանորդը վերադարձնում է համակարգիչը և վճարում պայմանագրով նախատեսված տուգանքը: Համակարգչի նկատմամբ Ընկերության սեփականության իրավունքը պահպանվում է պայմանագրի գործողության ամբողջ ընթացքում, եթե կողմերը ձեռք չբերեն այլ համաձայնություն պայմանագրի գործողության ժամկետի ընթացքում և/կամ դրա ավարտից հետո: Համակարգիչը բաժանորդին հանձնվում է հանձնման-ընդունման ակտով:

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 29.07.2010թ. N 1007-Ն որոշմամբ հաստատված «Հարկերի, տուրքերի և այլ պարտադիր վճարների գծով հարաբերությունները կարգավորող իրավական ակտերի դրույթների վերաբերյալ պարզաբանումների տրամադրման» կարգի 6-րդ կետի 2-րդ ենթակետով, **պարզաբանում են.**

1. Ընկերության և բաժանորդի միջև կնքված *Hi-Line (ADSL) ծառայության մատուցման պայմանագրով* Hi-Line (ADSL) ծառայության մատուցումը ապահովելու համար Ընկերության կողմից բաժանորդին առանձին պայմանագրով ի սեփականություն անհատույց փոխանցված (հանձնված) անհրաժեշտ վերջնային սարքավորումների (ADSL մոդեմ, սպիլտեր և այլն) արժեքը (հարկման նպատակով սկզբնական /ձեռքբերման/ արժեքը) Ընկերության համախառն եկամտից նվազեցման ենթակա չէ:

2. Ընկերության և բաժանորդի միջև կնքված *Դյուրակիր համակարգչի օգտագործման հանձնելու մասին պայմանագրի* շրջանակներում՝ բաժանորդին Hi-Line (ADSL) ծառայություններից օգտվելու հնարավորություն ընձեռնելու նպատակով, Ընկերության կողմից բաժանորդի ժամանակավոր օգտագործման հանձնված դյուրակիր համակարգչի գծով պայմանագրի գործողության ժամանակահատվածում հաշվարկված ամորտիզացիոն մասհանումները նվազեցվում են Ընկերության համախառն եկամտից՝ որպես համախառն եկամտի հետ կապված մարքեթինգի ծախսեր:

Պայմանագրի գործողության ժամկետի ընթացքում և/կամ դրա ավարտից հետո Ընկերության կողմից բաժանորդին ի սեփականություն անհատույց փոխանցված (հանձնված) դյուրակիր համակարգչի՝ հարկման նպատակով մնացորդային արժեքը Ընկերության համախառն եկամտից նվազեցման ենթակա չէ: